
ՀԱՅԲԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ ԶՈՀՎԱԾ ՀԱՅ ՆԿԱՐԻՉՆԵՐ

ԿԻՐԱԿՈՍՅԱՆ Մ. Ա.

Հայրենական մեծ պատերազմում զոհված հայորդիների շարքերում քիչ չէին շնորհալի, տաղանդավոր արվեստագետները, որոնք պիտի արարեին նոր ստեղծագործություններ՝ հարստացնելով մեր կերպարվեստի գանձարանը: Սկսվեց պատերազմը, և նրանցից շատերը, մի կողմ դնելով վրձինը, մեկնեցին ռազմաճակատ. ոմանք վերադարձան՝ շարունակելով ստեղծագործել, ոմանք էլ հետ չեկան, հերոսաբար ընկան մարտերում:

Հայ արվեստաբանների կողմից քիչ է ուսումնասիրվել Հայրենական մեծ պատերազմում զոհված հայ արվեստագետների կյանքը և արվեստը: Նրանց ստեղծագործական գործունեության ներկայացման առումով կարևոր ներդրում եղավ հրապարակախոս, բանաստեղծ, գրականագետ Սասուն Գրիգորյանի՝ «Մուսաները չլռեցին» վերտառությամբ գիրքը¹, որում արժանի տեղ է զբաղեցնում «Կտավները՝ մնացին անավարտ. հայ նկարիչները թիկունքում և ռազմաճակատում» գլուխը՝ նվիրված զոհված հայ նկարիչների կյանքին ու ստեղծագործությանը: Գնահատելի է նաև Հայաստանի ազգային պատկերասրահի երկարամյա գիտաշխատող Անգին Առաքելյանի «Անավարտ դիմանկարներ» աշխատությունը (2007), որն ընդգրկում է հուշագրություններ, փաստավավերագրական նյութեր, նամակներ և լուսանկարներ, ինչպես նաև զոհված 41 նկարչների դիմանկարային ակնարկները:

Երևանի Փ. Թերլեմեզյանի անվան գեղարվեստի պետական ուսումնարանի մանկավարժների և ուսանողների հիշատակը հավերժացնող հուշատախտակում առկա են պատերազմում զոհված հայ արվեստագետների (թվով՝ 40) անունները. Կորյուն Միմոնյան, Լևոն Տոնականյան, Վանիկ Կարապետյան, Մարգիս Ալեքսանյան, Անդրանիկ Մարկոսյան, Կոստանդին Մարգարյան, Գևորգ Բա-բայան, Ջոնիկ Զաքարյան, Սահակ Մովսիսյան, Սուրեն Մարգարյան, Թորգոմ Մակարյան, Լևոն Թոթովենց, Հայկազ Գրիգորյան և շատ ուրիշներ: 1980-ականների սկզբին Նկարիչների միության նախասրահում կանգնեցվեց Հայրենական մեծ պատերազմում զոհված նկարիչների մարմարե հուշատախտակը (հեղ.՝ քանդակագործ Յուրի Միմոնյան, 1940-1992):

Անդրադառնանք առավել ակնառու, կայացած, հանրապետական և միջազգային ցուցահանդեսների մասնակիցներ Կորյուն Միմոնյանի, Լևոն Տոնականյանի, Անդրանիկ Մարկոսյանի և Լևոն Թոթովենցի կյանքին և արվեստին:

Նրանցից առաջին երեք նկարիչների կենսագրականները որոշ առումներով նույնական են. ծնունդով Արևմտյան Հայաստանի՝ Սթան, Արդահան, Բերդ

¹ Գրիգորյան Ս., Մուսաները չլռեցին, գիրք 1, Ե., 1989:

բնակավայրերից էին²: 1915 թ. եղեռնից մազապուրծ, կորցնելով հարազատներին՝ նրանք 1920 թ. ապաստան գտան Լենինականի ամերիկյան որբանոցում, այնուհետև 1926 թ. տեղափոխվեցին Երևան. հաջորդեցին ուսումնառության տարիները Գեղարդ տեխնիկումում (այժմ՝ Փ. Թերլեմեզյանի անվան գեղարվեստի պետական քոլեջ) և Լենինգրադի գեղարվեստի ակադեմիայում:

Գեղանկարչության իրապաշտական ուղղության հունում է կազմավորվել և զարգացել Կորյուն Միմոնյանի (1910-1943) արվեստը: Հարուստ չէ նկարչի ստեղծագործական ժառանգությունը՝ ավելի քան մեկ տասնյակ գործեր. էսքիզներ, բնանկարներ, կոմպոզիցիոն աշխատանքներ: Նկարիչը մի քանի տարի դասավանդել է Գեղարդ տեխնիկումում, եղել է Հեղափոխական նկարիչների երիտասարդական միավորման (OMAXP) անդամ: Ռեալիստ գեղանկարչի շնորհը դրսևորվել է «Աշուն» (նկ. 1), «Ճանապարհով վերադարձող հոտը» և այլ բնանկարներում՝ զրազետ կառուցված կոմպոզիցիոն պլաններով, գունային ներդաշնակ անցումներով, որ լրացվում են աշխատանքներում առկա հանդարտ զգաց-մունքայնությամբ: «Կ. Միմոնյանը երկնագրող էր՝ օժտված կոլորիտի անբասիր ձիրքով, նրա բնանկարները՝ օբրաների և կապույտների օգնությամբ կառուցված հյութեղ և չափազանց հավաքված կոլորիտով նյութականությամբ, ռեալիստական արտահայտչականությամբ՝ թարմ ու աննախադեպ երևույթ էին 1930-ական թվականների սովետահայ կերպարվեստում»³: Երիտասարդ նկարչին հատկապես լայն ճանաչում բերեց «Յուսուֆի սպանությունը» (1939) կոմպոզիցիոն կտավը, որն առաջին անգամ ցուցադրվեց 1939 թ. «Մասունցի Դավիթ» էպոսի 1000-ամյակին նվիրված ցուցահանդեսում և ավելի ուշ՝ 1941-ին Խորհրդային Հայաստանի 20-ամյակին նվիրված հորեյանական պատկերահանդեսում⁴: Արվեստարան Ռ. Դրամբյանը, բարձր գնահատելով այդ կտավի գեղանկարչական արժեքը, գտնում էր, որ Կ. Միմոնյանը երևան է բերել կոմպոզիցիոն բարդ խնդիր լուծելու ունակություն, և անհրաժեշտ է, որ արվեստագետն ազատվի սև գույների նկատմամբ ավելորդ նախասիրությունից⁵: Այն առաջին մարտանկարներից է հայ կերպարվեստի պատմության մեջ և իր արժանի տեղն է զբաղեցրել Հայաստանի ազգային պատկերասրահի մշտական ցուցադրությունում: Այս թեմատիկ կտավում կարելի է որոշ զուգահեռներ անցկացնել XVIII-XIX դդ. ֆրանսիական ռոմանտիզմի կարկառուն նկարիչ Էժեն Դելակրուայի մարտանկարների հետ՝ ֆիգուրների կոմպոզիցիոն մոդելավորման առումով:

² Դզունի Դ., Հայ կերպարվեստագետներ (համառոտ բառարան), Ե., 1977, էջ 317: Ստեփանյան Գ., Կենսագրական բառարան (հայ մշակույթի գործիչներ), հ. Բ, Ե., 1981, էջ 309:
³ Քոլոզյան Բ., Հարությունյան Վ., Նկարիչներ (Սովետական արվեստ, 1958, N 8, էջ 55):
⁴ Համառոտ ուղեցույց «Մասունցի Դավիթի դարաշրջանը» ցուցահանդեսի, Ե., 1939, էջ 6:
⁵ Դրամբյան Ռ., Կերպարվեստի հորեյանական ցուցահանդեսներ (Սովետական արվեստ, 1941, N 1, էջ 35-36):

Ուսումնասիրելով Կ. Միմոնյանի գործերը՝ կարող ենք փաստել, որ նրա արվեստում շոշափելի է ակադեմիական դպրոցի ազդեցությունը, որոշ աշխատանքներում նկատվում է հակումը դեպի մուգ կոլորիտը: Մամուլում դրվատանքի խոսքերի է արժանացել Կ. Միմոնյանի «Ինքնադիմանկարը»: Մուգ կոլորիտով ստեղծված, իրապաշտական գեղանկարչության կանոններին համահունչ, լուսաստվերային անցումներով տրված այս դիմանկարը գրավում է դիտողին ուղղված պարզ, մաքուր և անթաքույց հայացքով: Նկարիչ Էդ. Իսաբեկյանը այս գործի մասին գրել է. «Ախ, այդ դիմանկարը... ինչպիսի լրջություն, ինչ հուսալի, վստահ ինքնադրսևորում, ներքին ուժ և հանգստություն»⁶:



Նկ. 1. Կորյուն Միմոնյան, «Աշուն», 1940, կտավ, յուղաներկ, ՀԱՊ

1936-ին Միմոնյանին թույլատրեցին դիպլոմային աշխատանքը՝ «Կոմունիստների գնդակահարումը Տաթևում», կատարել Երևանում, սակայն այսօր այդ գործը չկա. Էդ. Իսաբեկյանի կարծիքով, հավանաբար, կտավն ուղարկել են Լենինգրադի գեղարվեստի ակադեմիա, որտեղից այն հետ չի եկել: Կ. Միմոնյանի ուսանողական ընկերուհու՝ նկարչուհի Հեղինե Աբրահամյանի խոսքերով, Միմոնյանի դիպլոմային աշխատանքը

⁶ Իսաբեկյան Էդ., Հիշողության մշուշի միջից (Գրական թերթ, 16-30. VI. 1998):

Լենինգրադի պաշարման ժամանակ այրվել է, մնացել է միայն լուսանկարը, որը պահվում է ակադեմիայի արխիվում⁷ :

1936-1941 թթ. Միմոնյանը ապրել և ստեղծագործել է Երևանում, ցուցադրվել Հայաստանի նկարիչների միության բոլոր ցուցահանդեսներում, մասնակցել շրջիկ արվեստանոցի շրջագայություններին:

1942 թվականին, երբ 409-րդ հայկական դիվիզիայի հետևակային գնդի լեյտենանտ Կ. Միմոնյանը արիաբար կռվում էր Տուապսեի մերձակայքում, նրա «Հանդիպում» (1942) ջրաներկ կտավը ցուցադրվում է «Հոկտեմբերյան Սոցիալիստական մեծ հեղափոխության 25-ամյակին» նվիրված ցուցահանդեսում, իսկ «Պարտիզաններ» գործը ներկայացվում է «Սովետական Հայաստանի նկարիչները Հայրենական մեծ պատերազմին» պատկերահանդեսում⁸ :

Կորյուն Միմոնյանը մահկանացուն կնքել է 1943-ին, Սոգդոկի շրջանում մղվող մարտերում:

Քաղաքային բնակարանների ինքնատիպ գործեր է կերտել Լևոն Տոնականյանը (1911-1941): 1930 թ. Երևանի Գեղարդ տեխնիկումն ավարտելուց հետո նա աշխատանքի է անցնում Լենինականի թիվ 3 յոթնամյա դպրոցում, գեղանկարչություն դասավանդում Ուկրաինայում՝ Դնեպրոպետրովսկի ուսումնական հաստատություններից մեկում: Գեղարդ տեխնիկումում դասավանդել է կոմպոզիցիա և գեղանկարչություն, 1939-ից Նկարիչների միության անդամ էր: Լ. Տոնականյանը իր նկարիչ ընկերներ Վանիկ Գարապետյանի և Արա Բեքարյանի հետ 1939-ին գորակոչվում է բանակ: Ժամանակակիցների խոսքերով՝ նա պոռթկացող հույզերի տեր անձնավորություն էր, ամեն մի գործին նվիրվում էր իրեն հատուկ կրքոտությամբ, գիտեր ինքնամոռաց աշխատանքի հաճույքը: Նա առանձին սիրով էր պատկերում մեր վերակառուցվող մայրաքաղաքի նոր թաղամասերը: Երևանի պատմության թանգարանում պահվում են նկարչի «Վերակառուցվող Երևան» (1935) և «Տեսարան Կոնդից» (1935) կտավները: Գեղարվեստական այլ որակներով օժտված այս գործերում առաջնային նշանակություն են ստանում լուսաստվերային անցումները, արևաշող լույսի անդրադարձի բավական հմուտ պատկերումը: Տոնականյանին հաջողվել է ներդաշնակորեն համադրել բնության և ճարտարապետության կապը: Երփնագրողի բուռն խառնվածքն էր դրսևորվում նրա ստեղծագործություններում: Նրա ներդաշնակ գույները իսկապես գերող էին և կտավներին նրբին գեղեցկություն էին հաղորդում: «Անչափ սիրում էր մեր Կոնդը՝ իր ծուռ ու մուռ փողոցներով և հարթ կտուրներով», - գրում է Արա Բեքարյանը⁹ :

⁷Ղորխմազյան Վ., Կորյուն Միմոնյան. իմ կյանքը և իմ վրձինը պատկանում են իմ ժողովրդին... <http://sovet.am/ru/sovet.am/sovet.am/sovet.am/sovet.am/2595-2012-04-20-16-47-13> (1.05.2015, 15:00):

⁸ Գրիգորյան Ս., Գույների վարպետը (Ավանգարդ, 27.VI. 1984):

⁹ Բեքարյան Ա., Նրանք երեք ընկերներ էին (Սովետական արվեստ, 1975, N 5, էջ 44):

Տոնականյանը գոհվեց պաշարված Լենինգրադում 1941 թ.:

Բոլորովին այլ գունամտածողություն ուներ Անդրանիկ Մարկոսյանը (1913-1944): Նա 1933-1935 թթ. Լենինականի կերպարվեստի դպրոցի տնօրենն էր: 1930-ին մասնակցել է Հեղափոխական երիտասարդ նկարիչների միավորման, 1933-ին՝ «Խորհրդային կերպարվեստը 13 տարում», 1940-ին՝ «Խորհրդային կերպարվեստը 20 տարում» և «Խորհրդային կերպարվեստագետների միության էտյուդային աշխատանքների հաշվետու» ցուցահանդեսներին¹⁰: 1940-ին Մարկոսյանը դարձավ Նկարիչների միության իսկական անդամ, ապա՝ միության կերպարվեստի սեկցիայի նախագահ: Արվեստագետ Եղիշե Հովհաննիսյանի խոսքերով՝ Մարկոսյանն իր մասնակցությունն է ունեցել Երևանի Օպերային թատրոնում «Ալմաստ» օպերայի նկարչական ձևավորման աշխատանքներին¹¹:

Ա. Մարկոսյանն այն նկարիչներից էր, որոնց ստեղծագործական տարերքը բնութային է: Բնության հանդեպ անհուն սերն է նրանց ոգեշնչում, թե տալիս և դառնում ստեղծագործելու անսպառ աղբյուր: Նա նրբին զգացմունքով ու ջերմությամբ է վերարտադրել բնությունը: «Զգացումներն էլ պետք է ունենան իրենց գույնն ու ձայնը: Ու՛մ է պետք անձայն, համր, սառը և անկիրք գունա-նկարը», - կարդում ենք ուսանողական ընկերոջը՝ նկարիչ Մամվել Մանասյանին հասցեագրած նրա նամակում¹²: Ա. Մարկոսյանի գործերից են՝ «Գարնանային տեսարան», «Ամռան այգում», «Ձնհալ», «Նկարիչ Ստեփան Աղաջանյանի դիմանկարը», «Ինքնադիմանկար»:

Գունային առումով Միմոնյանի և Տոնականյանի ստեղծագործություններից տարբերվող, երփնագրի կտիվ շեշտադրումներով, դետալների հանդեպ անտարբեր, պատկերման ընդհանրական ոճով արված և, միննույն ժամանակ, ներքին ներդաշնակություն ու հոգեպարար խաղաղություն են արտահայտում Ա. Մարկոսյանի նկարները: Լ. Տոնականյանի ստեղծած՝ Կոնդի պատկերներից տարբերվում է Ա. Մարկոսյանի «Տեսարան Կոնդից» (1939) աշխատանքը՝ գերակշռող կանաչների և թույլ դարչնագույնի համադրումներով և ճարտարապետական կառույցների սակավ պատկերմամբ: Եթե Տոնականյանը ռեալիստական պատկերառճով է վերարտադրել թաղամասի տեսարանները, ապա Մարկոսյանը երփնագրում է իրեն հարազատ պատկերման ընդհանրական ոճով, գրեթե իմպրեսիոնիստական թեթևությամբ:

Հակոբ Կոջոյանի սիրելի սանը՝ Անդրանիկ Մարկոսյանը, գոհվեց 1944 թ., Մոնլենսկի համար մղված մարտերում:

Լևոն Թոթովենցը (1924-1943) հայ գրականության ականավոր դեմքերից մեկի՝

¹⁰ Խորհրդային կերպարվեստագետների միության էտյուդային աշխատանքների հաշվետու և շրջիկ նկարչական արվեստանոցի 1939 թվականի աշխատանքների 8-րդ ցուցահանդեսի կատալոգ, Ե., 1940:

¹¹ Այս մասին տե՛ս Գրիգորյան Ա., էջ 148:

¹² Նույն տեղում:

Վահան Թորթովենցի միակ ժառանգն էր: Լ. Թորթովենցը նախնական կրթությունը ստացել է Երևանի Ն. Կրուպսկայայի անվան դպրոցում, որի նախասրահի պատի մարմարե սալաքարին փորագրված են այն բոլոր սաների անունները, որոնք իրենց կյանքը նվիրաբերեցին հանուն հայրենիքի և ընկան Մեծ հայրենականի մարտադաշտում: Նրանց մեջ էր նաև տաղանդավոր գրողի որդու անունը: 1939-ին Լ. Թորթովենցն ընդունվել է Գեղարդ տեխնիկում, մինչ գորակոչվելը՝ 1942 թ., սովորել նկարիչներ Ս. Աբեղյանի և Բ. Քոլոզյանի դասարաններում: Սոր Լյուսյա Թորթովենցի տված երաժշտական կրթության շնորհիվ Լևոնը հիանալի նվագում էր կլառնետ և ընդգրկվում է Նովոռոսիյսկի մատույցներում գործող 318-րդ դիվիզիայի երաժշտական ջոկատում¹³: 1943 թ. գարնանը, երբ թեժացել էին Նովոռոսիյսկի ազատագրման համար մղվող մարտերը, Լ. Թորթովենցը ներգրավվում է դեսանտային ջոկատներում և իր մարտական ընկերների հետ միայն երկու օրվա ընթացքում մարտադաշտի առաջին գծից դուրս բերում 24 վիրավորի: Այդ գործում ցուցաբերած արիության համար



Նկ. 2. Լևոն Թորթովենց, Ճեպանկար, 1928, թուղթ, մատիտ, ԳԱԹ

նա պարգևատրվում է «Խիզախության համար» մեդալով¹⁴: Նա առաջադրված էր «Կարմիր աստղի» շքանշանի, սակայն դեսանտի՝ Կերչի մյուս ափն անցնելու

¹³ Առաքելյան Ա., Անավարտ դիմանկարներ, Ե., 2007, էջ 243:

¹⁴ Նալբանդյան Ս., Նաև զենքով (Երեկոյան Երևան, 15.X. 1982):

ժամանակ կտրվեց նրա կյանքի թելը¹⁵:

Լ. Թոթովենցի գործերից է Հայաստանի ազգային պատկերասրահում «հանգրվանած», լայն և էքսպրեսիվ վրձնահարվածներով ստեղծված «Ցողիկը կարմիր բերետով» (1942) կտավը: Նկարչի նախընտրած գունային վառ համադրումները շեշտվում են կարմիրի և կանաչի շարժուն խաղով, դիմագծերի բացակայությունը կարծես աշխատանքին հաղորդում է անավարտության երանգ:

Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում են պահվում Լ. Թոթովենցի գծանկարները, ջրաներկով, տուշով կատարված 25 գործ¹⁶: Այբումում զետեղված գծանկարների մի մասը թվագրված է 1928-ով, և բացակայում են աշխատանքների անվանումները: Թեև այս փոքրածավալ, կամերային գործերը կատարողական առումով թերի են, չունեն Կ. Միմոնյանի և Լ. Տոնա-կանյանի պրոֆեսիոնալ վարպետությունը և գեղարվեստական բարձր արժեք չեն ներկայացնում, այնուամենայնիվ, վկայում են երիտասարդ նկարչի ինքնատիպ շնորհի, նախասիրությունների և գեղանկարչության հանդեպ նրա սիրո մասին: Շարքում աչքի են ընկնում հատկապես գծապատկերները, որտեղ դրսևորվել են շնորհալի գծանկարչի կատարողական վարպետության առաջին ծիլերը (նկ. 2): Ընդհանուր առմամբ Թոթովենցի գործերը «շնչում են» յուրօրինակ քնարականությամբ և մեղմ ռոմանտիկայով: «Միրուն Լևոն էինք ասում, - պատմում է ժողովրդական նկարիչ Սուրեն Սաֆարյանը, - նատյուրմորտներ, դիմանկարներ և գրաֆիկական աշխատանքներ նկարելիս Լևոնն անմրցելի էր»¹⁷: «Բնանկար», «Դիմանկար», «Նատյուրմորտ» և պահպանված մի քանի այլ նկարներ վկայում են, որ այսօր կունենայինք մի բազմաշնորհ արվեստագետ, եթե 1943-ին Կերչում դեսանտայինների համար դեղորայք փոխադրելիս 19 տարեկան հասակում չգոհվեր Լևոն Թոթովենցը:

«Հայրենական մեծ պատերազմի տարիներին հերոսաբար զոհվեցին հայազգի նկարիչներից ու քանդակագործներից շատերը՝ Լենինականի նկարչական դպրոցի, Երևանի Գեղարդ տեխնիկումի, Լենինգրադի Գեղարվեստի ակադեմիայի, Մոսկվայի գեղարվեստական բուհերի շրջանավարտներ, մանկավարժներ և սաներ»¹⁸:

Նրանք, ովքեր ռազմաճակատից չվերադարձան, այսօր էլ մեզ հետ են իրենց հերոսական կերպարներով և թողած գեղարվեստական ժառանգության զոհարներով:

¹⁵ Նամակներ փառքի և անմահության, Ե., 1969, էջ 195, Նալբանդյան Ս., Կերչը գրոհողների շարքերում (Մովեստական Հայաստան, 13. VI 1982):

¹⁶ ԳԱԹ, Վահան Թոթովենցի ֆոնդ, N 640-649:

¹⁷ Գրիգորյան Ս., Մուսաները չլռեցին, ..., էջ 189:

¹⁸ Աղասյան Ա., Հայ կերպարվեստի զարգացման ուղիները XIX-XX դարերում, Ե., 2009, էջ 97:

АРМЯНСКИЕ ХУДОЖНИКИ, ПОГИБШИЕ В ВЕЛИКОЙ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЕ**КИРАКОСЯН М. А.**

Резюме

Творчество погибших в Великой Отечественной войне художников Коряна Симоняна, Левона Тонакяна, Андраника Маркосяна и Левона Тотовенца занимает достойную нишу в армянской живописи. Талант К. Симоняна как художника-реалиста проявился в пейзажах “Осень” (1940), “Стадо на дороге к дому” и многих других работах. Оригинальные городские пейзажи были созданы Л. Тонакяном (“Перестраивающийся Ереван”, 1935, “Вид с Конда”, 1935). Активными цветовыми акцентами характеризуются работы А. Маркосяна. В фондах Музея литературы и искусства им. Е. Чаренца хранятся выполненные акварелью и тушью 25 работ одаренного художника Левона Тотовенца–сына известного армянского писателя Ваана Тотовенца.

THE ARMENIAN ARTISTS PERISHED IN THE GREAT PATRIOTIC WAR**M. KIRAKOSYAN**

Abstract

The author analyzes the life and career of the artists Koryun Simonyan, Levon Tonakanyan, Andranik Markosyan and Levon Totovents, perished in the Great Patriotic War. They have occupied a worthy niche in the Armenian painting. K. Simonyan’s talent as a realist artist revealed itself in such landscapes as “Fall” (1940) and “The Herd on the Way Home”, and others. Original urban landscapes were created by L. Tonakanyan: “Yerevan Reconstructed” (1935) and “A View from Kond” (1935). Intense color accents mark A. Markosyan’s works. In the course of our research efforts at the Ye. Charents Museum of Literature and Arts 25 graphic works in watercolor and black ink were discovered. The works were drawn by Levon Totovents, the son of a famous Armenian writer Vahan Totovents.